**ՔԱՂՎԱԾՔ**

**ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 21.12.2018թ. ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ**

Նիստը վարում էր համայնքի ղեկավար, ավագանու անդամ Մամիկոն Ասլանյանը:

Մասնակցում էին՝

Հայաստանի Հանրապետական կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

*Արտյոմ Գրիգորյանը, Արմեն Մատինյանը, Վահագն Ավագյանը, Հայկազ Մովսիսյանը, Դավիթ Սիմոնյանը, Սոխակ Մելքոնյանը, Գայանե Քալանթարյանը, Մարինե Հովհաննիսյանը, Սեյրան Ղամբարյանը, Արման Ափինյանը:*

Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության ավագանու խմբակցության անդամ՝

*Արևիկ Լոքյանը, Սեյրան Աղաբեկյանը* :

«Հայկական Վերածնունդ» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

*Արկադի Փելեշյանը, Կարեն Դավթյանը, Տիգրան Նազարյանը:*

«Լուսավոր Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ *Քրիստ Մարուքյանը, Կարինե Ղուկասյանը, Հայկազ Սիմիկյանը, Վահե Կոռյանը, Հրանտ Այվազյանը, Արմեն Եղիազարյանը, Անահիտ Կարապետյանը:*

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու անդամներ՝ *Հրաչիկ Ղամբարյանը, Մարիամ Ապերյանը, Դավիթ Հակոբյանը:*

Նիստից բացակայում էին՝

Հայաստանի Հանրապետական կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Խորեն Վարդանյանը, *Վահե Դոխոյանը:*

«Հայկական Վերածնունդ» կուսակցության ավագանու անդամներ՝

*Հասմիկ Խլուպուզյանը, Էրիկ Մովսիսյանը:*

«Լուսավոր Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

*Ռոմիկ Մարգարյանը, Կարեն Բեկչյանը, Սուրեն Կարապետյանը:*

Նիստին մասնակցում էին նաև համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար *Արթուր Օհանյանը*, համայնքապետարանի ստորաբաժանումների ղեկավարներ, հասարակական կազմակերպությունների և ԶԼՄ-ների ներկայացուցիչներ:

Նիստը վարող *Մամիկոն Ասլանյանը* ժամը 11.10-ին նիստը հայտարարեց բացված:

(Վանաձորի ավագանու 2018 թվականի 5-րդ նստաշրջանի 21.12.2018թ. ավագանու հերթական նիստի տեսաձայնագրությունն ամբողջովին առկա է (www.vanadzor.am կայքի գլխավոր էջում):

Մինչ նիստի օրակարգին անցնելը, նիստը վարողն առաջարկեց շնորհավորել «Լուսավոր Հայաստան» և «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցություններին դեկտեմբերի 9-ի Ազգային ժողովի ընտրություններում անցողիկ շեմը հաղթահարելու և խորհրդարանում ազդեցիկ ներկայացուցչություն ունենալու համար:

Նիստը վարողը նաև առաջարկեց շնորհավորել համայնքապետրանի աշխատակազմին, կազմակերպչական աշխատանաներին անմիջական մասնակցություն ունեցած ՀԿ-ներին և ակտիվիստներին Վանաձորը «Երիտասարդական մայրաքաղաք» ճանաչվելու կապակցությամբ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ հաստատել օրակարգն ամբողջությամբ:

**Կողմ՝ _ 26, քվեարկությամբ հաստատվեց օրակարգը, ինչը նաև օրակարգի առաջին հարցի սպառումն էր:**

**Հաստատվեց օրակարգը՝**

1. Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 20–ի թիվ 109-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին

զեկ.՝ Վ.Գրիգորյան

2. Վանաձոր համայնքի ավագանու 11 դեկտեմբերի 2017թվականի «Վանաձոր համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 104-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

զեկ.՝ Գ.Մացակյան

3. Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային և կրկնաճուրդային վաճառքի նվազագույն մեկնարկային գներին համաձայնություն տալու մասին

զեկ.՝ Ս.Աբովյան

4. Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը մրցույթով կառուցապատման իրավունքով տրամադրելու և հողամասերի վարձավճարների մեկնարկային գներ սահմանելու մասին

զեկ.՝ Ս.Աբովյան

5. Վանաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին

զեկ.՝ Ս.Աբովյան

6. «Հայաստան» մարզական հասարակական կազմակերպության Վանաձորի մասնաճյուղի գույքահարկի գծով արտոնություն սահմանելու մասին

զեկ.՝ Վ.Դավիթավյան

7. Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին

զեկ.՝ Մ.Ասլանյան

1. **ԼՍԵՑԻՆ** - Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 109-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին:

Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Վահե Գրիգորյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

**Քվեարկությամբ, կողմ՝ 26, ընդունվեց որոշում:**

2. **ԼՍԵՑԻՆ** - Վանաձոր համայնքի ավագանու 11 դեկտեմբերի 2017թվականի «Վանաձոր համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 104-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետ Գևորգ Մացակյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

**Քվեարկությամբ, կողմ՝ 24, ձեռնպահ՝ 1 /Ա.Կարապետյան/, ընդունվեց որոշում:**

3. **ԼՍԵՑԻՆ** - Վանաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային և կրկնաճուրդային վաճառքի նվազագույն մեկնարկային գներին համաձայնություն տալու մասին

Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 19, դեմ՝ 4 /Մ.Ապերյան, Հ.Ղամբարյան, Դ.Հակոբյան, Վ.Կռոյան/, ձեռնպահ՝ 3 /Ք.Մարուքյան, Ա.Եղիազարյան, Ա.Կարապետյան/, ընդունվեց որոշում:**

4. **ԼՍԵՑԻՆ** - Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը մրցույթով կառուցապատման իրավունքով տրամադրելու և հողամասերի վարձավճարների մեկնարկային գներ սահմանելու մասին:

Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Ավագանու անդամներ Վահե Կռոյանը և Հրաչիկ Ղամբարյանն առաջարկեցին նախագծի բ) ենթակետը քվեարկել առանձին:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց սահմանված կարգով առաջինը քվեարկել ներկայացված նախագիծը, այն չընդունվելու դեպքում անդրադառնալ ավագանու անդամներ Վահե Կռոյանի և Հրաչիկ Ղամբարյանի առաջարկին:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել ներկայացված նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 14, դեմ՝ 10, ձեռնպահ՝ 2 /Գ.Քալանթարյան, Ս.Մելքոնյան/, ընդունվեց որոշում:**

5. **ԼՍԵՑԻՆ** - Վանաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 26, ընդունվեց որոշում:**

6. **ԼՍԵՑԻՆ** - «Հայաստան» մարզական հասարակական կազմակերպության Վանաձորի մասնաճյուղի գույքահարկի գծով արտոնություն սահմանելու մասին:

Զեկուցեց համայնքապետարանի Եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնի պետ Վահագն Դավիթավյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 18, դեմ՝ 7 / Ք.Մարուքյան, Ա.Եղիազարյան, Ա.Կարապետյան, Կ.Ղուկասյան Հ.Այվազյան, Հ.Սիմիկյան, Վ.Կռոյան/, ձեռնպահ՝ 1 /Վ.Ավագյան/, ընդունվեց որոշում:**

7. Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ որոշել Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը և առաջարկեց հաջորդ նիստի օր նշանակել 2019 թվականի փետրվարի 15-ը: Առաջարկը դրվեց քվեարկության:

**Քվեարկությամբ, կողմ՝ 26, ընդունվեց որոշում :**

Վանաձորի ավագանու հերթական նիստի օր նշանակեց 2019 թվականի փետրվարի 15–ը, ժամը 11:00-ին:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԱՐԹՈՒՐ ՕՀԱՆՅԱՆԸ

Արձանագրությունը կազմեց Է. Հովսեփյանը